«ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

Ընդունված է
Ազգային ժողովի կողմից Հանրապետության Նախագահի
առարկություններով և առաջարկություններով
29 մայիսի 1996 թ

Գ Լ Ո Ւ Խ XI

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԱԳԱՎԱՌՈՒՄ~~ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԱԳԱՎԱՌՈՒՄ~~

Հոդված 42.1

Հյուպատոսական հիմնարկի ղեկավարն ապահովում է հյուպատոսական հիմնարկի կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակի գործառույթների իրականացումը: Հյուպատոսական հիմնարկի՝ որպես սպասարկման գրասենյակի գործառույթների իրականացման կարգը և մատուցվող ծառայությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 42.2

Հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ծառայությունների շրջանակում կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակի հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է դիմողի նույնականացումը.

2) ապահովում է մատուցվող ծառայությունների համար նախատեսված պետական տուրքի և օրենքով նախատեսված այլ վճարների գանձումը.

3) ապահովում է մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը, փոխադրումը և հանձնումն իրավասու մարմնին.

4) դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում դիմողին առաջարկում է համալրել դրանք.

5) անհրաժեշտության դեպքում դիմողին տրամադրում է խորհրդատվություն՝ փաստաթղթերի ամբողջական ընդունումը, փոխադրումը և հանձնումն ապահովելու նպատակով.

6) ապահովում է վարչարարության իրականացման արդյունքում ընդունված ակտի հանձնումը դիմողին: